Հաշվետվություն

2018թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ՇՎՏՄ թեժ գծով ստացվող հեռախոսազանգերի վերաբերյալ

2018թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում Տեսչական մարմնի թեժ գծով ստացվել է 62 զանգ, որից միայն 9-ն են վերաբերել Տեսչական մարմնի լիազորություններին, մասնավորապես՝ 1-ը՝ ստուգաթերթերին, 3-ը՝ գնված ապրանքի որակին (լվացող-մաքրող միջոց, մանկական կոշիկ, օծանելիք), 1-ը՝ ռեեստրին, 1-ն՝ օծանելիքակոսմետիկական ապրանքի ներկրման համար անհրաժեշտ պահանջներին (ըստ տեխկանոնակարգի) և 3-ը՝ մակնշմանը:

Մնացած 53-ը եղել են ոլորտից դուրս, մասնավորապես՝ 33 զանգ վերաբերել է գնված ապրանքների հետ վերադարձմանը կամ փոխարինմանը՝ հեռուստացույց, հեռախոս, նոթբուք, հագուստ: Մյուս 20 զանգերից 1-ական զանգ վերաբերել է ՀԴՄ չտրամադրելուն, դիմումին ժամանակին չպատասխանելուն, ներքնազգեստին, ապրանքի շտրիխ կոդին, ալիքների հեռարձակմանը, բարձր երաժշտությանը, աշխատանքից ապօրինի ազատմանը, պահածոյին, երաշխիքին, ապրանքը՝ նախքան գնելը, վնասելու պատճառով գնել պարտադրելուն, սննդի ներկրմանը, թեյավճար վերցնելուն, ջրաչափին, հեղուկ գազին, հեղուկ գազի լիցքավորման կայան բացելուն, սխալ ապրանք տրամադրելուն, իսկ 2-ական զանգ՝ ապրանքի վերանորոգմանը և ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ ընկերությանը: Ոլորտից դուրս զանգերի հեղինակների անհանգստությունը եղել է սպառողների իրավունքների պաշտպանությունը: